

պիտի կենդրուսանար: Այն դպրոցը, ուր Թրէօբէլն էր, չունէր ընդարձակ դասընթաց. դասընթացը բաւականին սահմանափակ էր. — էջ 2- : «.. իրենց խստիւ կաշկանդում են նրա սիստեմի մեռեալ տառից»: — 7. : «Դնդից և խորանարդից յետոյ Ֆր. տալիս է գլանակ, դարձեալ ծայրերի և միջինի զարգացման՝ իր նոյն օրէնքի հիման վրայ»: — էջ 10. : «Դազանները? երեսում են նրանց պարտէզում սովորաբար ամառը: Երեսում են ճապարներ, կրիաներ, բազէ, բուն, ցինը...» — էջ 27. : Սովորական բլուր, բլրակ բառի տեղ գործ է ածուած «լեռնակ» բառը. մի բանի տեղ կրկնուած է «կանգնած ճանապարհ», ոպառկած ճանապարհ» և այլն:

Մատնացոյց անելով Ս. Վ. հրատարակած աշխատութեան մի բանի թերութիւնները, այնուամենայնիւ ողջունում ենք այս մեծահատոր զըթի լոյս տեսնելը. «Մանկական պարտէզ»-ը մեր մանկավարժական աղջատ գրականութեան մէջ պատուաւոր տեղ կը ունի և գործնական կեանքումն էլ մեծ ծառայութիւն կանի այդ գործով զըթառուղ մայրերին և վարժուհիներին: Յարգելի հեղինակն աշխատել է ըստ կարելոյն բազմակողմանի նիւթերով ճոխացնել իւր հրատարակութիւնը և օգտակար դարձնել: Գրքի գինը — երեք բուրլի — գուցէ թանկ չէ ի նկատի ունենալով եղած ծախքը և աշխատութիւնը, բայց մեր հանգամանքներն աչքի առաջ ունենալով աւելի նպատակայարմար կլինէր, թէ կիսով չափ պակաս լինէր նշանակուած:

Շատ ցանկալի կլինէր, եթէ մեր հայաշատ քաղաքներում շուտով բացուէին կանոնաւոր ծաղկոցներ, ուր մանուկներն իրենց մայրենի լեզուով նախապարաստուէին դպրոցական շրջանի համար:

2. Նախագիծ կանոնադրութեան ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ. Թիֆլիս 1906 թ. էջ 16.:

Կովկասի հայութեան ամենաջերս ցանկութիւններից մէկը կատարուեց. հայ եկեղեցական — ծխական դպրոցների ուժով փակուած դոները կրկին բացուեցան: Նորից վերսկսուեց քաղաքակրթական անդուլ գործունէութեան շրջանը. հայ ցիր ու ցան եղած ուսուցչական դասակարգը կենդանութիւն ստացաւ, համախմբուեց և կրկին դիմեց իւր նախկին փայփայած և սիրած գործին: Ով ծանօթ է մեր նախկին դպրոցական կեանքի ելևէջին, նա կյիշէ՝ թէ որպիսի եռանդով և իդէալական ինքնա-

զոհութեամբ էր գործում հայ ուսուցչական դասակարգը, մա-  
նաւանդ գաւառներում, յետ ընկած, խուլ անկիւններում՝  
գտնուող հայ գիւղերում: Հայ ուսուցիչը ոչ միայն իբրև դա-  
սատու էր գործում գաւառում, այլ և նա էր գաւառի հայու-  
թեան խսկական քաղաքակրթութեան շաւղի հարթողը, «կուլ-  
տուրաբեգէրը». նա էր ժողովրդի առաջնորդը, քարողիչը. նրան  
թմրած դրութիւնից արթնացնողը և կրթիչը:

Այս թէն հանգամանքները փոխուել են և ժողովրդի գիտակցութեան աստիճանը բարձրացել է, բայց և այնպէս հայ ուսուցչական դասակարգը դեռ զործունէութիւն լայն ապարէզ ունի նոյն ուղղութեամբ ընթանալու. Որպէս զի հայ ուսուցչական դասակարգի զործունէութիւնը նախկին արդիւնաւէտ հետևանքներն ունենայ, անհրաժեշտ է, որ նախ ինքը, զործող դասակարգը որոշ կազմակերպութիւն և ծրագիր ունենար. այս անհրաժեշտութիւնն զգացին հայ ուսուցիչներն իրենց վերսկսուող զործունէութեան հենց սկզբում և անցեալ տարրուայ հոկտեմբերին համախմբուելով Թիֆլիզում մօտ 120-հոգի՝ որոշեցին կազմակերպել «հայոց դպրոցների ուսուցչական միութիւն»: Այդ ուսուցչական համագումարը երկու նիստ ունեցաւ \*) և մանրամասնօրէն պարզելով «միութեան» անհրաժեշտութիւնը, ընտրեց մի մասնաժողով (բիլօ) «միութեան» ծրագիրը մշակելու և ուսուցչական ընդհանուր ժողովի ըննութեանն առաջարկելու:

Ահա մասնագողովի կազմած այդ ծրագիրն է «Նախագիծ կանոնադրութեանը», որի մասին մի քանի խօսք ենք ուղղում ասել:

«Միութեան» նպատակն է. Նվաստել հայ ուսուցչի նիւթական ապահովութեան, մոտաւոր զարգացման եւ հասարակական դիրքի բարձրացման»: Այս որոշումից պարզ է, որ «միութիւնը» արհեստակցական (պլոֆէսիժնալ) ընկերութիւն է լինելու և գասակարգային շահերի պաշտպան է հանդիսանալու:

«ՇԱԿԱՆ ՄԻՒԾԹԻՆ»Ը ազատ ընկերակցութիւն լի.  
Նելով Վարչական—դպրոցական գործունէութիւն չպէտք է ու-  
նենայ. ծրագիր կազմողները սակայն այդ փունկցիան էլ են  
յատկացրել «միւԾեահը» Ա-գլխի է. և ը. կէտերով. ՄիւԾ-  
թիւնը «մատակարարում է հայոց դպրոցներին, փոխադարձ

\*.) Նախագահութեամբ մեր աշխատակից մանկավարժ պր. Իս. Յարութինեանի, ԽՄԲ:

համաձայնութեամբ հոգաբարձուների, ուսուցիչներ և վարժուակիններ։ քննում է ուսուցիչների և վարժուակինների պաշտօնից հեռացնելու պատճառները. ուսուցիչների միմեանց և հոգաբարձուների հետ ունեցած տարածալութիւնները։ Այս երկու կէտերը զուտ վարչական ֆունկցիաներ են և պատկանում են դպրոցական -վարչական հաստատութիւնների իրաւասութեանը. եթէ ընկերութիւնը զբաղուի այս ինդիբներով, ահազին եռանդ ու ժամանակ կկորցնի և հազիւ թէ կարողանայ իւր նպատակին համար։ Ուսուցիչների միմեանց հետ ունեցած տարածայնութիւնների համար կարելի է ունենալ պատուի միջնորդ գատարան։

«Միութեան իրաւունքները» հատուածում ասուած է. միութիւնը կարող է (?) ունենալ եկեղեցապատկան և դպրոցապատկան անշարժ կալուածների եկամուաններից և գումարներից որոշ տոկոս և արդիւնք։ ինչմեռ. ով պէտք է այդ տոկոսը յատկացնէ «միութեանը». այդ բնչ իրաւունք է, որ ակարող է բառով է որոշում. շատ խախուտ և անիրագործելի կէտ։

§. 16. «Պատուաւոր անդամներն ընտրւում են խորհրդից։ թիւրիմացութիւններից խուսափելու համար աւելի լաւ կինի եթէ պատուաւոր անդամները խորհրդի առաջարկութեամբ՝ ընտրուեն համագումարից։

§. 17. «Անդամավճար՝ քաղաքի ուսուցիչները (վճարում են) 5 բուբլի, գիւղինը 3 բուբլի։ շատ է. 3 և 2 բաւական կինի՝ ի նկատի ունենալով հայ ուսուցչի նիւթական անսախանձելի վիճակը։

§. 18. «Միութեան աջակցող անձինք համարւում են իրեւ նպաստող անդամներ», անորոշ է. թէ բնչ տեսակ աջակցութիւն է պահանջւում բարոյական թէ նիւթական։

§. 20. «Միութեան խոշոր ծառայութիւն ցոյց տուող անձինք ընտրւում են պատուաւոր անդամ։ նոյնպէս անորոշ է. ցանկալի էր, որ առհասարակ հայ դպրոցական գործին աշքի ընկնող ծառայութիւն ցոյց տուող անձինք ևս այդ պատուին արժանանային։

§. 26. «Խորհրդի և վարչութիւնների բոլոր անդամները ամեն տեղ ձրի են կատարում իրանց պարաւորութիւնները, բացի այս դէպքերից, երբ միութեան խորհուրդը վարձատրութեան արժանի կատնի», Դարձեալ կամաւականութիւնների դուռն է բացում, ինչո՞ւ համար և որ դէպքերում «վարձատրութեան արժանի» պէտք է լինեն վարչութեան անդամները։

§. 28. «Վարչութիւններն իրենց կարգադրութեան տակ պանուող գումարների հարկաւոր մասը թողնում են ընթացիկ ծախքերի համար, համաձայն նախահաջուի որոշման, իսկ մնացորդը առանց յետաձգութեան ուղարկում են խորհրդին։ «Հարկաւոր մասը» շատ առաձգական է. վահչութիւնների ձեռքն եղած ամբողջ գումարներն ել կարող են հարկաւոր լինել և այդպիսով խորհուրդը կարող է ոչինչ էլ չստանալ. աւելի յարմար կլինի՝ որոշ տոկոս նշանակել և պարտաւորեցուցիչ կերպով։

§. 31. «Խորհրդի տեղը որոշում է համագումարը։ Եթէ այս խմբազրութիւնն ընդունուի, միութեան կենդրոնական խորհուրդի տեղը կարող է շարունակ փոփոխուել, որ ոչ ցանկալի է և ոչ էլ նպատակայարմար. արդեօք ինչ պատճառաբանութիւններով Տփխիսը որոշ կերպով չէ համարուել իրքե միութեան կենդրոն, քանի որ մեր բոլոր ընկերութիւնների կենդրոնը Տփխիսն է եղել միշտ և ամեն յարմարութիւն ունի այդ բանի համար։

§. 32. «Խորհուրդն իբրև միութեան կենդրոնական հիմնարկութիւն զեկավարում է նրա բոլոր գործերը՝ համապատասխան նրա գոյութեան նպատակին։ «Գոյութեան նպատակը» տարբեր անհամաներ կարող են տարբեր հասկանալ. թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար՝ պէտք է լինի համաձայն միութեան կանոնադրութեան։

§ 56. «Համագումարը կանոնաւոր է, եթէ ներկայ լինեն բոլոր անդամների թուի  $\frac{1}{2}$ -ից աւելի։ Եթէ միութիւնը հարիւրաւոր անդամներ ունենայ: « $\frac{1}{2}$ -ից աւելին», մեծ թիւ է. յարմար կլինի  $\frac{1}{2}$ , կամ առ առաւելն  $\frac{1}{3}$  ը. համագումարը ժողովի համար, որի անդամները շատ հեռաւոր տեղերից են գալու, վերին աստիճանի անգործնական է այս յօղուածի շարունակութիւնը և անդամների օրինաւոր թուի պակասութեան պատճառով եթէ չկայանալ առաջին համագումարը, այն ժամանակ նշանակում է երկրորդը...» Երբ կը նշանակուի. եկողները պէտք է վերադառնան և մէկ էլ նորից գան։

§ 57. «Համագումարի իւրաքանչիւր անդամ պէտք է ընտրէ իւր նախագահը և քարտուղարը...» անմիտ բան է և համանական է, որ տպագրական սխալ լինի. պէտք է կարդալ համագումարն իւրաքանչիւր անգամ...»

Կանոնադրութիւնը որոշելով միութեան վարչութիւնների, ընդհանուր ժողովների, խորհրդի և համագումարի ֆունկցիաները, միշտ դրամականի և արտաքինի շուրջն է պտտում,

իսկ չվիսաւոր բանը մոռացուած է. ով է իրագործուած միութեան նպատկները. այսինքն ով է հրատարակում օրինակ մանկավարժական թերթը, հիմնում թանգարան, գրադարան, սանատորիա, հիւանդանոց և այլն-խորհնմուրդը թէ համագումարը, վարչութիւնները թէ ընդհանուր ժողովները. ոչ մի խօսք չէ ասուած. միայն մի կէտ է յիշուած «համագումարի» զբաղմոնը-ների շարքում, «որոշել դասագնի կամ ոռնիկի մինիմումը»—ուրիշ ոչինչ:

Ընդհանուր ուսուցական ժողովի քննադատութիւնն բովից անցնելով այս կանոնադրութիւնը իրագործելի կարելի է համարել. մեր ջերմ ցանկութիւնն է, օր առաջ իրագործուած տեսնել «Ուսուցչական միութիւնը»:

ԲՐԻԶ

### ԱՏԱՑՈՒԱՆ ԳՐԹԵՐ

**Վիճակացոյց թաղային վարժարանաց Կ.** Պօլսոյ, պատրաստեալ յուսումնական խորհրդոյ, հրամանաւ տ. տ. Մադաքիա ս. Պատրիարք հօր. վիճակ 1906. յունուար 1. Կ. Պօլսու

**Ատրպետ.** Խիւլիֆաթ. պատմ. հետազօտութիւն. երրորդ տպ. Ալէքսանդրովու 1906. գ. 50 կ.

**Մարգար.** Հոգեվարքի ծիծաղը. պատմուածք Բագուայ սարսափներից. Բագու, գ. 10 կ.

**Զեցդէլ.** Նօրմալ բանուորական օր. ոռւս. թրգմ. Մ Եսայեան. գրադարան Կեանքի № 4. Թիֆլիս. 1906. գ. 5 կ.

**Կառուցկի.** Ասստրիայի ճգնաժամը. լեզու և ազգ. ոռւս. թրգմ, Ա. Ս. գրադ. Կեանքի № 3. Թիֆլիս 1906. գ. 7 կ.

**Տ. Ա. Լեւոնեան.** Աստղիկ. տաղեր քսարերգական. Բոստոն Ալլանտեան տպարան 1904. գ. 1 ֆր.

**Կանոնադիր Հայկական բարեգործական ընդհանուր միութեան.** Գահիրէ: Ալէքսանդրիա. 1906.

**Արշակ Սպարապետեանց.** (փոխ.) Թուաբանական խնդիրներ և օրինակներ. Մոսկ. բադ. դպր. ուսուցիչների. պրակ բ. 30 կ. և պրակ գ. 30 կ. Թիֆլիս 1906

**Ատրպետ.** Հողատիրութիւնը Կովկասում. հետազօտութիւն. Ա. Իեքսանդրովու 1906 գ. 10 կ.